

ի ժառանգութենէ նորին, և դապղն Հապեչաց համարեալ հետեւողս իւր. Խիրեալ է եկեղեցեաց ստացուածոց ևւ կալուածոց նոցին, որք չարտականին Յունաց: Ապա օլատուիրէ, ի հասանիլ հրովարտական ազատել զնոսս ի ձեռաց նոցին. բառնալ գհակառակութիւնս նոցա ըստ ամենայնի, զոր գրեցաք ի վեր անդր. զի բարերարութեամբ եւ դթութեամբ Արքային, մնասցեն Հայք ի սեփական ժառանգութիւնս իւրեանց, որպէս Հաստատեալ են հրովարտաւօք առաջին Թագաւորքն, զորս մատոյց յատեան Եղիազար վարդապետ »:

Եւ զինի այսմ հրամայեաց դատաւորն երթալ բազմութեամբ ի գիւղն Բեթղէհէմի, ևւ անդ եւս ընթեռնուլ զհրովարտակն. չոքան անդ Բղէհէմն, լիտխանորդ դատաւորին Շէրէֆ Էտաին՝ եկեղեցականք Հայոց, Յունաց եւ այլք: Ընթերցան զհրովարտակսն յեկեղեցւոջ անդ առաջի բազմութեան, և ըստ ականարկելոյ դատաւորին ծանուցին զիմաստս նոցին կղերացն Յունաց. ևւ լիտխանորդ նոցին հնազանդեալ հրամանին՝ յանձն արար Եղիազարու զդուռն Հիւսիսային այրին Մենդեան և զբանալի նորին, և դարձան յերուսաղէմ: Եւ զինի աւուրց լիտխանորդն Յունաց եւ ի ձեռս Եղիազարու զամենայն սեփականութիւնս և զկալուածս Հապեչաց, ևւ դատաւորն պատուեր եւ Յունաց չգործել ինչ ընդդէմ հրովարտակին:

Երեմիա Չէլեպի քէօմիւրճեանց եղբայր Տէր Կոմիտաս քահանայի նահատակելոյ, եկեալ էր յուխտ յերուսաղէմ յաւուրս Աստուածատուր Պատրիարքի. նախ քան զգրուումն Յունաց զվանօրայս Հապեչաց (1650). գրէ ի առձկաբարբառ գիրս իւր ընդդէմ Յունաց՝ այսպէս, « Հապէչք ի տաճարն Ս. Յարութեան ի Թափօրին զինի Հայոց չըջին. վանօրայք և Ուխտատեղիք նոցին են ի ձեռս Հայոց, ևւ նա ինքն Երեմիա Չէլեպի յուխտաւորութեան անդ իւրում ինքնին բացեալ է զդուռն մատրան Ս. Աստուածածնի (յանուն Մարիամու Եգլպտացւոյ) ի ներքոյ մատրան Կաթինաց, ի գաւթի տաճարին Ս. Յարութեան, և լուցեալ զկանթեղս նորս յերեկոյեան ժամուն »: Դարձեալ գրէ անդ, « Ի գալտեան Հապեչաց ի Կոստանդինուպօլիս Հիւրընկալեալ են յեկեղեցիս Հայոց, որ աղօթէին հաւու-